# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
# ՈՐՈՇՈՒՄ

**N 400 - Ա** **09 սեպտեմբերի 2016 թ.**

## ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետը

***որոշում եմ՝***

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման <<Այլ նպատակներ բյուջեից>> հոդվածով նախատեսված միջոցներից սոցիալական աջակցության նպատակով Հայաստանի Հանրապետության սահմանները պաշտպանելիս զոհված ժամկետային զինծառայող Արման Ղանդիլյանի ընտանիքին հատկացնել 100000/մեկ հարյուր հազար/ դրամ միանվագ օգնություն՝ համաձայն հավելվածի:
2. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի գլխավոր ֆինանսիստին՝ սահմանված կարգով կատարել համապատասխան փաստաթղթային ձևակերպումներ, գումարը վճարել մարզպետարանի աշխատակազմի քարտուղարության վարչատնտեսական բաժնի վարիչ Մկրտիչ Սաֆարյանի միջոցով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԱՆԴՐԱՆԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ

Հավելված
ՀՀ Գեղարքունիքի մարզպետի
2016 թ. սեպտեմբերի 9 - ի
N 400 - Ա որոշման

ՑՈՒՑԱԿ

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂԻ

| հ/հ | ազգանուն, անուն | հասցե | հատկացված գումարի չափը դրամով | ծանոթություն |
|---|---|---|---|---|
| 1. | Արման Ղանդիլյանի ընտանիք | Գեղարքունիքի մարզ, ք.Գավառ,Արծվաքար թաղ. | 100000/մեկ հարյուր հազար/ | Զոհված զինծառայողի ընտանիք |

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ԽԼՂԱԹՅԱՆ

Կատարող՝ՖՍՏԶ Վարչություն
Ճ.Բաղեյան